

Պաշտոնական ընդդիմախոսի գրախոսական

Հրաչուհի Ալբերտի Ղազարյանի «Ռեսպիբլիկան սինցիստիալ եվ գրիպի վիրուսների կլինիկական նշանակությունը շնչական վարակի կապակցությամբ հոսպիտալացված մինչև հինգ տարեկան երեխաների շրջանում» ատենախոսության վերաբերյալ ներկայացված ԺՂ.00.06 «Մանկաբուժություն» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար

Ղազարյան Հ.Ա. թեկնածուական աշխատանքը նվիրված է խիստ արդիական ինդրի ռեսպիբլիկան սինցիստիալ (ՌՍՎ) և գրիպի վիրուսների (ԳՎ) կլինիկական նշանակությանը սուր շնչառական վարակի (ՄՇՎ) կապակցությամբ հոսպիտալացված մինչև հինգ տարեկան երեխաների շրջանում: Ներկայումս ՄՇՎ-ներն ունեն մեծ բժշկական, ինչպես նաև պետական նշանակություն, հատկապես զարգացող երկրներում: ՄՇՎ-ով հիվանդ երեխաների շրջանում ՌՍՎ և ԳՎ տեսակարար կշռի ուսումնասիրումը, տարբեր էթիոլոգիական խմբերում առանձին կլինիկական ախտանիշների և լաբորատոր-գործիքային փոփոխությունների նշանակության հաստատումը, ինչպես նաև ՌՍՎ/ԳՎ արագ հայտնաբերման ազդեցության գնահատումը մեծ հետաքրքրություն են ներկայացնում ինչպես տեսական, այնպես էլ գործնական տեսանկյուններից:

Սուր շնչառական վիրուսային հիվանդությունը (ՄՇՎՀ) հավաքական հասկացություն է, որը բնութագրվում է առավելապես վերին շնչուղիների կատարալ բորբոքումով, ուղեկցվում է տենդով, հազով, բկանցքի ցավով, փոշոտցով, քթի փակվածությամբ և ընդհանուր ինքնազգացողության տարբեր աստիճանի վատացմամբ: Ներկայումս հայտնի են շնչառական վարակների ավելի քան 200 վիրուսային հարուցիչներ, սակայն, առավել տարածվածներն են ՎԳ Ա/Բ, ՌՍՎ, ռինովիրուսները, կորոնավիրուսները, ադենովիրուսները: Հարուցիչների ներկայացված ցանկը չի համարվում վերջնական: Ըստ արտասահմանյան հետազոտությունների, հիվանդներից ստացված կենսանյութերի հետազոտության արդյունքում 30%-ից 60% դեպքերում հարուցիչ նույնականացում հնարավոր չէ կատարել: Ավելին, ՄՇՎՀ-ի շրջանառող հարուցիչների էթիոլոգիական կառուցվածքը կարող է տարբեր լինել տարբեր բնակլիմայական գոտիներում, երկրներում, ինչպես նաև տվյալ երկրի տարբեր շրջաններում: Միևնույն ժամանակ, ՄՇՎՀ-ի բազմաէթիոլոգիկությունը, բնակչության, հատկապես երեխաների, բարձր ընկալունակությունը շնչառական վիրուսների հանդեպ և վերջիններիս ամենուրեք տարածվածությունը ամբողջ աշխարհի առողջապահական համակարգի վրա ստեղծում են մեծ բժշկական և սոցիալ-տնտեսական բեռ: Այսպիսով, եթե ամբողջ աշխարհում չափահաս անձը սուր շնչառական վարակով հիվանդանում է տարեկան 2-4 անգամ, ապա նախադպրոցական տարիքի երեխան՝ 6-10 անգամ: Երկար տարիների ընթացքում ՄՇՎՀ և գրիպը վարակային հիվանդությունների կառուցվածքում ամբողջ աշխարհում հանդիսանում են առաջատար, և սրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ ՄՇՎՀ և ԳՎ-ով հիվանդացության էպիդեմիոլոգիական իրավիճակը որոշվում է երեխաներով, ըստ տարբեր տվյալների՝ մինչև 66,7%: Միաժամանակ, մինչև հինգ տարեկան երեխաների ԳՎ-ով և ՄՇՎՀ պայմանավորված մահացության գրեթե բոլոր դեպքերը արձանագրվում են զարգացող երկրներում: Սակայն, քանի որ հնարավորությունները սահմանափակ են,

վիրուսների և նրանց գենետիկ նյութի հայտնաբերման մեթոդները բարդ են, իսկ երբեմն նաև դժվար հասանելի, շատ հարցեր մինչ այսօր մնում են քիչ ուսումնասիրված: Իսկ, օրինակ, ՌՄՎ-ի նշանակությունը որոշվում է ոչ այնքան հաճախականությամբ, այլ ընթացքի ծանրությամբ և բարդությունների առաջացմամբ: Հաստատվել է, որ վաղ կրծքահասակ երեխաների՝ բրոնխիտիտների 74%-ը և թոքաբորբերի 54%-ը զարգանում են ՌՄՎ-ի ֆոնին: Կրծքահասակ երեխաների հոսպիտալացում պահանջող բրոնխիտիտների 80%-ը և թոքաբորբերի 60%-ը պայմանավորված են նշված վարակով: Ընդ որում, ՌՄՎ հիվանդացությունը առավելագույնը դիտվում է 3-4 ամսական հասակում, իսկ հիվանդացության ամենաբարձ ցուցանիշները արձանագրվում են 1-6 ամսական երեխաների շրջանում: Գործնականում ժամանակակից մոլեկուլային-գենետիկ մեթոդների ներդրմանը զուգահեռ ստեղծվել է հնարավորություն գնահատել գրիպի և ՄՇՎՀ-ի հարուցիչների կառուցվածքը, և բնութագրել ոչ միայն գրիպի, նաև այլ վիրուսների համաճարակաբանական գործընթացի առանձնահատկությունները: Սակայն, Հայաստանի Հանրապետությունում բացակայում են համալիր հետազոտությունները, որոնք ուղղված կլինեին գրիպի և այլ վիրուսների միաժամանակյա վերլուծությանը: Օրինակ, մինչև երկու տարեկան ՄՇՎՀ-ով երեխաների էթիոլոգիայի ուսումնասիրությունը, կատարված Ռուսաստանի Դաշնության առողջապահության նախարարության կողմից, ցույց է տվել, որ արտահիվանդանոցային և հոսպիտալացված դեպքերի հարուցիչների 27,5%-ից մինչև 31%-ը պայմանավորված է եղել հենց ՌՄՎ-ով:

Ներկայումս ակնհայտ է, որ ՄՇՎՀ-ով բուժառուների վարման, հիվանդության ծանրության գնահատման և էլքի կանխագուշակման համար հատուկ նշանակություն ունի էթիոլոգիկ գործոնի արագ հայտնաբերումը: Վերը շարադրվածը հիմնավորում է ներկայացված աշխատանքի խիստ արդիականությունը և կարևորությունը, իսկ հայցորդի կողմից առաջարկվող գիտական հետազոտությունների ծրագիրը հիմնավորված է: Հետևաբար, հեղինակի կողմից ընտրված թեման արդիական է, ժամանակակից, գտնվում է ՄՇՎՀ-ի ախտորոշման, բուժման և պրոգնոզի բարելավմանն ուղղված հետազոտությունների շարքում:

Գիտական խնդիրների, եզրակացությունների և առաջարկությունների հիմնավորության աստիճանը:

Առաջադրված խնդիրների լուծման նպատակով հեղինակի կողմից հետազոտվել են ՄՇՎ-ով հոսպիտալացված մինչև հինգ տարեկան 915 երեխա: Կատարված հետազոտությունների զգալի ծավալը պայմանավորված է ՌՄՎ/ԳՎ-ի արագ հայտաբերման դերի գնահատմամբ, տարբեր էթիոլոգիական խմբերում կլինիկական համեմատական անալիզով, ներառյալ հարուցիչ չհայտնաբերված խումբը: Կատարված են համալիր հետազոտություններ, ընտրված նյութի մանրակրկիտ մշակումը, ներառյալ ժամանակակից ծրագրերի օգտագործմամբ վիճակագրական վերլուծությունը, հեղինակին հնարավորություն են տվել առաջ քաշել դրույթներ, որոնք ունեն գիտական և գործնական մեծ նշանակություն: Կատարված հետազոտությունների ծավալը, ադեկվատ համալիր մեթոդների կիրառումը ապահովում են հիմնավորության բարձր աստիճան, եզրահանգումները, եզրակացությունները և առաջարկները տրամաբանորեն հետևում են Հ.Ա. Ղազարյանի պաշտպանությանը ներկայացված աշխատանքի նյութերից:

Ատենախոսության գիտական նորույթը և գործնական նշանակությունը:

Աշխատանքում ներկայացված տվյալները և վերջիններիս գիտական նորույթը կասկած չեն հարուցում:

Հեղինակի կողմից, առաջին անգամ Հայաստանում, քիթ-ըմպանի քուրքի հետազոտության նպատակով ներդրվել են ՌՄՎ և ԳՎ հակածիններ հայտաբերող արագ-թեստերը՝ ուղղակի, որակական իմուն քրոմատոգրաֆիկ քննության միջոցով:

Աշխատանքի կլինիկական նշանակությունը հանդիսանում է այն, որ ՄՇՎ-ի տարբեր էթիոլոգիկ խմբերում ուսումնասիրվել են կլինիկական ընթացքի առանձնահատկությունները, լաբորատոր և ռենտգենաբանական հետազոտության արդյունքները, կատարվել է ստացված արդյունքների և այլ երկրներից ստացված նմանատիպ տվյալների համեմատական վերլուծություն:

Աշխատանքի մեծ ձեռքբերում է հանդիսանում այն գլուխը, որում հեղինակը կատարել է ՄՇՀ-ով հիվանդների կլինիկա-լաբորատոր ցուցանիշների ինտեգրալ վերլուծություն: Հեղինակը արդարացիորեն նշել է, որ հիվանդության վիրուսային էթիոլոգիայի վաղ հայտաբերումը կարող է նվազեցնել հակաբիոտիկների նշանակման հաճախականությունը, ինչը կհանդիսանա կատարված բուժման և առողջացման արդյունավետության ցուցանիշ: Հեղինակը առաջարկում է ՄՇՎ-ով հիվանդներին, շնչուղիների օբստրուկցիայի և բրոնխիտի առկայության դեպքում պարտադիր հետազոտել ՌՄՎ վարակի վերաբերյալ, իսկ տենդի դեպքում, երբ կատարալ նշանները աղքատիկ են՝ ԳՎ վարակի վերաբերյալ:

Հայցորդը նշում է, որ ՌՄՎ և ԳՎ վարակների վիճակագրական տվյալները Հայաստանում չեն արտացոլում երեխաների նշված վիրուսներով իրական հիվանդացությունը և առաջարկում է, ինչպես մի շարք զարգացած երկրներում, ներդնել քիթ-ըմպանի քուրքից ՌՄՎ և ԳՎ հակածին հայտնաբերող արագ թեստերը, ինչը իր հերթին կօգնի նվազեցնել հիվանդանոցում գտնվող բուժառուների հետազոտությունների ծախսերը, քանի որ ՊՇՌ քննությունը, ծախսատար հետազոտություն է և ոչ միշտ է հասանելի զարգացող երկրներում, այդ թվում նաև Հայաստանում:

Թեմայի համապատասխանությունը ԵՊԲՀ-ի հիմնական գիտական պլաններին:

Ատենախոսության թեման համապատասխանում է ԵՊԲՀ մանկաբուժության թիվ 2 ամբիոնի գիտա-մեթոդական աշխատանքների ուղղվածությանը: Ատենախոսության պլան-անոտացիան հաստատվել է ԵՊԲՀ Գիտակոորդինացիոն խորհրդի 2013թ., հուլիսի 3-ի թիվ 6 նիստին:

Ատենախոսության բովանդակությունը և ավարտուն լինելու գնահատականը:

Ատենախոսությունն իրենից ներկայացնում է մոնոգրաֆիկ ախատանք, որի ծավալը, կառուցվածքը և ձևավորումը առարկություններ չի առաջացնում: Աշխատանքը շարադրվել է 117 տպագիր էջերի վրա, ներառում է ներածություն, գրականության վերլուծություն, նյութը և մեթոդները, սեփական հետազոտության գլուխ 4 ենթագլխով, անփոփում, եզրակացություններ, գործնական առաջարկներ, հավելված և գրականության ցանկ: Աշխատանքը շարադրվել է ըստ ավանդական պլանի, ընդգրկում է 16 աղյուսակ և 14 նկար:

Անհրաժեշտ է նշել լավ կատարված գրականության վերլուծությունը, որում ներկայացվել են ՌՄՎ և ԳՎ-ի կլինիկա-պաթոգենեզի ամբողջական, ժամանակակից պատկերացումները, հղում կատարելով 159 արտասահմանյան հեղինակների աղբյուրի:

Ներածությունը ներկայացվել է հստակ, հեղինակը հիմնավորել է հետազոտության նպատակը և խնդիրները:

2-րդ գլխում տրվել է հետազոտության նյութի և մեթոդների բնութագիրը: Հայցորդը կիրառել է հիվանդների հետազոտության ժամանակակից մեթոդներ. քիթ-ըմպանի քսուքից ստացված նմուշում ՌՄՎ և ՎԳ հակաձևի հայտնաբերում՝ ուղղակի, որակական իմունոքրոմատոգրաֆիկ քննությամբ:

Տպավորիչ է հետազոտության ծավալը (915 հիվանդ). իրականացվել է շուրջ 900 յուրահատուկ և նույնքան ընդհանուր քննություններ, ինչը հնարավորություն է տալիս հեղինակին բարձր հավաստիությամբ դատողություններ կատարել ՄՇՎ-ի էթիոլոգիայի և կլինիկայի վերաբերյալ:

3-րդ գլխում ներկայացվել է ՄՇՎ-ի էթիոլոգիական անալիզը ըստ «Արաբկիր» ԲԶ-ի 2013-14թթ. տվյալների: Մանրամասն նկարագրվել է ՌՄՎ և ԳՎ հարուցված ՄՇՎ-ի կլինիկա-լաբորատոր ընթացքի առանձնահատկությունները: Աշխատանքի խնդիրներին համապատասխան, առաջին անգամ, երեխաների շրջանում ՌՄՎ և ԳՎ հարուցված ՄՇՎ-ի ընթացքի կլինիկական առանձնահատկությունների բնորոշման նպատակով, կատարվել է կլինիկական ախտանիշների, լաբորատոր և ռենտգենաբանական տվյալների համեմատական քննություն՝ տարբեր էթիոլոգիական խմբերում: Հաշվի առնելով ստացված առոյունքը՝ կատարվել է նաև լաբորատոր ցուցանիշների հավանականությունների հարաբերության հաշվարկում:

Հետազոտության արդյունքները գլխում ստացված տվյալները մեծամասամբ արտացոլվում են փաստացի առաջին անգամ և լավ հիմնավորված են:

Ատենախոսության ամփոփումը շարադրվել է ավանդական ձևով՝ արտացոլելով ուսումնասիրվող հարցի էությունը և հիմնավորելով կատարվող հետազոտության կարևորությունը կլինիկական և գիտական ոլորտում: Ուշագրավ է հեղինակի գրականության տվյալների քննադատական մոտեցումը և մանրամասն համեմատությունը սեփական արդյունքների հետ:

Ատենախոսության եզրակացությունները հիմնավորված են, ամբողջական և ամբողջությամբ հետևում են աշխատանքի նյութից, վիճակագրորեն հավաստի են:

Գործնական առաջարկները կոնկրետ են, լակոնիկ, ինչը առաջին հերթին պայմանավորված է ստացված արդյունքների գիտական պոտենցիալով:

Սակայն կան որոշ դիտողություններ, որոնք ցանկալի է քննարկել.

1. «Թեմայի արդիականությունը» գլխում ցանկալի կլինիկալ լրացնել աշխատանքներով, տպագրված առավելապես վերջին 5 տարիներում:
2. Գրականության վերլուծությունում կարելի էր ներկայացնել Հայաստանում ՄՇՎ-ի էթիոլոգիական կառուցվածքը, օրինակ՝ ՀՀ հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնի տվյալները:
3. Եզրակացություններում ավելի հստակ ներկայացնել աշխատանքի 5-րդ խնդիրը՝ ՌՄՎ և ԳՎ վարակով հիվանդների վարման հանձնարարականները:

Վերը նշվածի հետ միասին, ատենախոսությունը իրենից ներկայացնում է հեղինակի ինքնուրույն, ավարտուն աշխատանք, շարադրվել է մասնագիտական գրական լեզվով, դյուրընթեռնելի է: Ընդհանուր առմամբ, աշխատանքն արժանի է դրական գնահատականի: Աշխատանքում ներկայացված նյութը խնդիրների առաջադրման, կլինիկական և լաբորատոր հետազոտությունների կազմակերպման և իրականացման մեջ հեղինակի անձնական մասնակցության արդյունք է: Գիտական դրույթները, ատենախոսության եզրակացությունները համապատասխանում են առաջադրված նպատակին և խնդիրներին, հիմնված են կլինիկա-լաբորատոր և վիճակագրական ընդգրկուն նյութի վրա:

Նախնական փորձաքննություն և արդյունքների ներդրում:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակված են 9 գիտական աշխատանքներում, այդ թվում՝ մեկը ազդեցության գործակից ունեցող միջազգային ամսագրում:

Ատենախոսության արդյունքները օգտագործվում են գործնականում՝ «Արաբկիր» ԲՀ-ում, ք.Երևան, ինչպես նաև ուսանողներին, կլինիկական օրդինատորներին և տարբեր մասնագիտությամբ բժիշկներին մանկական հիվանդությունների դասավանդման ժամանակ:

Մեղմագրի համապատասխանությունը ատենախոսության հիմնական դրույթներին:

Մեղմագիրը ամբողջությամբ համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը, հիմնական դրույթներին, եզրակացություններին և գործնական առաջարկներին:

Սկզբունքային դիտողություններ ներկայացված ատենախոսությանը չկան:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով վերը նշվածը, կարելի է եզրակացնել, որ Հրաչուհի Ալբերտի Ղազարյանի «**Ռեսպիրատոր սինցիտիալ եվ գրիպի վիրուսների կլինիկական նշանակությունը շնչական վարակի կապակցությամբ հոսպիտալացված մինչև 4 հինգ տարեկան երեխաների շրջանում**» թեմայով, բժշկական գիտությունների թեկնածուի հայցմանն ներկայացված ատենախոսական աշխատանքը հիմնավոր և ավարտուն գիտական ուսումնասիրություն է, որում հեղինակի կողմից կատարված հետազոտությունների հիման վրա մշակվել են տեսական դրույթներ, որոնց ամբողջականությունը կարելի է որակավորել որպես արդի գիտաբժշկական խնդրի՝ սուր շնչառական վարակների կլինիկական ընթացքի առանձնահատկությունների և պրոգնոզի լուծում: Ստացված արդյունքներն անուղղակի արտացոլում են բարդությունների զարգացման վտանգը, կարող են ազդել պրոգնոզի վրա, հնարավորություն են ստեղծում հիվանդանոցից դուրսգրումից հետո բուժառուներին վարել տարբերակված:

Ըստ արդիականության, նորույթի, կատարված հետազոտությունների մակարդակի, ստացված արդյունքների և եզրակացությունների հիմնավորման աստիճանի, գործնական առաջարկների, ատենախոսությունը բավարարում է ԲՈԿ-ի կողմից գիտական աստիճանի շնորհման կանոնակարգի թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԴ.00.06 - «Մանկաբուժություն» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝

Մ. Հերացու անվան ԵՊԲՀ

Ինֆեկցիոն հիվանդությունների ամբիոնի

բ.գ.դ., պրոֆեսոր

Հունվար 22, 2021թ

Նաիրա Մարտունի Գյուլագյան

Ստորագրությունը հաստատում էմ

Գիտքարտուղար՝



բ.գ.դ., պրոֆեսոր Տ. Գ. Ավագյան